ՁՈՀ

Ի. ՊՈՏԱՊԵՆԿՈ'Ի—Թարգմ. Մարտ. Ցարութիւնեանի

Դէպքս պատահեց ձմեռը, առաւօտեան վաղ։ Դեռ բոլորովին մութն էր, մաքուր երկնքի վրայ հանգչելու մօտ էին աստղերը։ Նախընթաց օրւայ ընթացքում եկած ձիւնով ծածկւել էր ամբողջ երկիրը։

Բազարը [1]) դեռ չէր սկսւել, բայց ամեն կողմից թափւում էին այնտեղ ձիու և եզի սայլեր։ Շինականները հարևան գեղերից զանազան բաներ էին բերում վաճառելու. ոմանք հաւաքւում էին իրեղէններ գնելու։

Ձիւնը ակների տակ ճռճռում էր, ձիերի տաք մէջքից բարձրանում էր գոլորշին. սայլերի վրայ նստած էին գիւղացի տղամարդիկ և կանայք։ Բայց քաղաքը դեռ քնած էր, այնտեղ դեռ չէր սկսւել գործունեայ կեանքը։

Հրապարակից ոչ հեռու, ուր կանգնում էին սայլերը, մի նեղ փողոցում, մութ քարէ պատի մօտ, նրան սղմւած, կանգնած էր մի բարձր մարդկային կերպարանք, որ թւում էր թէ անշարժ է։ Ոչ հեռու այս տեղից, փողոցի լապտերում վառւում էր գազի եղջիւրը, բայց նրա լոյսը շատ թոյլ էր և բարձր կերպարանքը մնացել էր մթութեան մէջ։ Սակայն, ուշադրութեամբ նրան նայելիս, կարելի էր տեսնել երկար նիհար իրանի վրայ մի փոքր գլուխ, ծածկւած կլոր գլխարկով, որը բոլորովին կպած էր նրա գլխին՝

[1]) Որոշ օրեր կենտրոնական մեծ գիւղում շրջակայ տեղերից գիւղացիներ են ժողովւում իրեր վաճառելու և գնելու համար։

չունենալով աչքերը արևից պահող մասը։ Գլխարկի տակից կախուած էին սպիտակ մազերի փունջեր, սպիտակ մազեր էին երևում նաև նոսր բեղերի և ցանցառ մօրուքի մէջ։ Նա մի փոքր կռացել էր և, երևում էր, դողում էր ցրտից։ Նորա ամբողջ հագուստն էր՝ պատռտած կօշիկներ, կարճ վարտիկ և երկար, տարօրինակ ձևի վերարկու, որ կախուած էր նրա վրայից, ինչպէս մի ծառի ոստից, ամեն կողմից կազմելով խոր-խոր ծալքեր։ Այս վերարկուն սաստիկ ճմրտուած էր, խունացել էր, և տեղ-տեղ կային նկատելի ծակեր։

Թւում էր թէ նա մի բանի էր սպասում։ Կարելի էր կարծել մինչև անգամ, թէ նորա սպասելիքները մի ինչ որ յարաբերութիւն ունէին երկնքի հետ, որովհետև նա յաճախ բարձրացնում էր գլուխը և նայում էր աստղերին։ Բայց նա երկնքից ոչինչ չէր սպասում. նա միայն ուզում էր գիտենալ, շուտ կը հանգչէին արդեօք աստերը, և կը հասնի առաւօտեայ գիշերի միջի այն ժամը, որը նա համարում էր իւր արհեստի համար ամենայարմարը։

Այդ ժամը հասաւ։ Յուրտը մի քիչ հուսկ տուեց։ Դատարկ փողոցներով մի ինչ որ ստուեր սկսեց արագ շարժուել։ Նա մօտենում էր լապտերներին և խսկոյն լապտերները հանգչում էին, ու մթնում էր։ Այն ժամանակ երկար մարդն էլ շարժուեց իր տեղից և ձիւնի վրայով կամացուկ և զգուշութեամբ մանգալով ուղևորուեց դէպի քաղաքի հրապարակը։

Սայլերը դադարեցին հաւաքուել։ Հրապարակը կիսով չափ բռնող փայտէ խանութները դեռ չէին բացուում։ Բազարում սովորական վաճառականական շարժումը դեռ չէր նկատուում։ Բարձր մարդը սակայն չըգնաց իսկական հրապարակը, այլ մի կերպ՝ նրա շուրջն էր պտտուում և, ըստ երևոյթին, շատ փորձուած աչքով դիտում էր նրան շատ մանրամասն։

Գիւղացիների սայլերը մէկը միւսի մօտ կարգով կանգնած էին այն տեղում, որը նրանց համար միանգամ ընդմիշտ նշանակուած էր։ Քանդած ձիերը և եզները այդտեղ, հէնց իրենց լծերի մօտ էին կանգնած, միայն նրանց գլուխները դարձրած էին դէպի սայլերը. նրանք կոխել էին իրանց գլուխները խոտի մէջ և հանդարտ, առանց շտապելու որոճում էին։ Ոչ գիւղացիներ և ոչ կանայք էին երևում։ Կարելի էր նկատել, որ մի քանի սայլերից կախուած են

գիւղացոց ոտեր, հաստ իւխտէ կօշիկներով, և այն ժամանակ սայլի վրայ լսւում էր մրափոց։ Բայց եկածների մեծ մասը թողել էին իրանց սայլերը, ձիերը և եզները ու գնացել ճաշարան թէյ խմելու, տաքանալու։ Բազարի պահապանը քնկոտ և սաստիկ անբաւական դէմքով հրապարակի մի ծայրից միւսն էր անցնում իւր հաստ գաւազանը թխկացնելով սառած գետնին։ Նա, ի հարկէ, պիտի հսկէր, որ սայլերի վրայ ամեն բան ապահով լինի, բայց ամբողջ գիշերը չքնելուց յետոյ նա մի բան տեսնում էր արդեօք, յայտնի չէ։

Բարձրահասակ մարդը երկար վերարկուով հրապարակի շուրջը մի քանի շրջան անելով աւելի և աւելի մօտենում էր սայլերին։ Պարզ էր, որ նա ուսումնասիրում էր իրերի դրութիւնը։ Նա ուշադրութեամբ նայում էր գիշերուայ մթութեանը, և նրա սրատես աչքերը սայլերի վրայ կատարուած ամեն բան տեսնում էին։ Երկու անգամ շարաթը նա հէնց այսպէս յայտնուում էր այստեղ և զննում էր իւրաքանչիւր սայլ, որոնք ծանօթ էին նրան ամենայն մանրամասնութեամբ։ Նա կարողանում էր զանազանել նրանց ոչ միայն նրանց կազմութեան առանձնայատկութիւններով, այլ նաև ձիերով—նրանց մազերի գոյնով, եզներով—նրանց եղջիւրների ձևով։ Այժմ նրա համար ամբողջ հարցը այն էր, թէ ո՞ր սայլը աւելի օգուտ էր խոստանում և քիչ վտանգ։ Պարզ էր, որ այդպիսի սայլ պիտի լինի այն, որ կանգնած է իրեն մօտիկ և գիշերապահից հեռու, այն, որի վրայ ոչ ոք չկայ քնած և որի տէրերը գնացել են ճաշարան։ Եւ նա այժմ ընտրեց։

Ահա նա կանգ առաւ մինի վրայ։ Դա իրենից հինգ քայլ հեռու էր։ Սայլի վրայ կայծն ինչ որ տոպրակներ, երևի հացով լիքը, խեղ կապերտը կիսով չափ ծածկում էր նրանց։ Առաջի մասում խոտ էր դարսած, իսկ խոտի վրայ տեղաւորուած էր ինչ որ երկանչուկ կապոց վերմակով ծածկուած։ Այս իսկ կապոցը գրաւեց երկար վերարկուով բարձրահասակ մարդի առանձին ուշադրութիւնը։ Արդեօք նրա բազմամեայ փորձը նրան թելադրեց, թէ երկու օրուայ քաղցն էր նրան առաջնորդում, բայց նրան թւաց, թէ այդ կապոցում ինչ որ ուտելու բան պիտի լինի։ Նա նայեց շուրջը, մի անգամ էլ համոզուեց, որ մօտերքում չկայ ոչ պահապան և ոչ

քաղաքապահ, որ շուրջը ամեն բան քնած է և չի կարող նրան հետևել, երկու ոստիւնով յայտնուեց նշանակած սայլի մօտ, խլեց կապոցը և արագ քայլերով հեռացաւ նոյն այն նեղ փողոցը, որտեղից դուրս էր եկել։

Նա տանում էր իւր կապոցը լայն վերարկուի տակ։ Նորա մրսած ձեռները կորցրել էին զգայնութիւնը, և նա չէր կարողանում որոշել, ինչ էր իսկապէս իւր ձեռքինը. նա մտածում էր միայն նրա մասին, որ շուտով դուրս սողար բոլոր ծուռ ու մուռ նեղ փողոցներից, խոյս տալով մեծ փողոցներից և գնար քաղաքից դուրս, ուր նա միշտ իրեն ազատ քաղաքացի էր զգում։ Դրա համար նա պիտի մեծ շրջան անէր։ Նորա ճանապարհը միշտ աւելի երկար էր, քան սովորական մարդինը։ Դա առաջանում էր նրանից, որ նա գիտէր բոլոր այն փողոցները, ուր կանգնում էին քաղաքապահները, և աշխատում էր նրանցից խոյս տալ։ Քաղաքացիների հետ նա մեծ ծանօթութիւններ ունէր, բայց այդ կապերով նա չէր պարծենում։ Նա գերադասում էր չպատահել այդ մարդկանց, որոնք, թէև նրա հետ բարեհաճութեամբ էին խօսում, բայց հաւատ չէին ներշնչում նրան։

Այս անգամ էլ նա չկարողացաւ եօլա գնալ առանց այդպիսի հանդիպման։ Հէնց մի լապտերի մօտ, որին մարելու հերթը դեռ չէր հասել, նա հանդիպեց մի բեղերաւոր ոստիկանի, որը նրան տեսնելով ծիծաղեց ու հարցրեց։

—Ա՛, Սերի, ո՞ւր ես գնում։

Բայց Սերին չպատասխանեց այդ հարցին, այլ ոստիկանական իշխանաւորի մօտից սահելով խառնուեց գիշերային մթութեան։

Նրան անուանում էին Վասկա Սերի [1]։ Տարօրինակ բան էր՝ այդպէս փոքրացրած ձևով անուանել մի մարդի, որ այդ տեսակ պատկառելի հասակ ունէր և դրա հետ միասին այդպիսի երկար ու լայն վերարկու էր կրում։ Եւ ինչու էին նորան այդպէս անուանում? Նորա վերարկուն շագանակագոյն էր։ Նա խիստ գունատուել էր, բայց մոխրագոյն չէր դարձել։ Երեսն ասես՝ հա,—դա իսկապէս մի

---

[1]) Մոխրագոյն Վասկա, Վասկա՝ Վասիլիյ (=Բարսեղ) անուան փոքրացրած և փաղաքշական ձևն է։ Ծ. Թ.։

տեսակ հողի գոյն ունէր և, ալիքների շնորհիւ, մոխրագոյն էր երևում։ Բայց միևնոյն է, նրան այդպէս էին անուանում, և նա ոչ մի ժամանակ դրա դէմ չէր բողոքում։ Նորա արհեստում անունը ոչ մի դեր չէր խաղում։

Երբ նա քաղաքի սահմանն անցաւ և դուրս եկաւ դաշտը, բոլորովին մթնեց, բայց այդ հանգամանքը նորան միայն ստիպեց քայլերը արագացնել։ Նա գիտէր, որ սա լուսանալուց անմիջապէս առաջ եղած մութն է և որ արևելքում երկինքը շուտով կ'սկսի շառագունել և դեռ հեռու արեգակի լոյսը կամացուկ կը ճեղքէ գիշերային խաւարը։ Իսկ նա ամենից աւելի վախենում էր ցերեկւայ լոյսից։

Ահա քաղաքը մնաց յետևում—հեռու. նա դուրս եկաւ մեծ ճանապարհից և գնաց, ինչպէս կարող էր թւալ, բոլորովին աննպատակ. բայց հասնելով կիսափուլ մի քարէ շինութեան, որ երբեմն ծառայել էր իբրև զօրանոց, նա կանգ առաւ, և վերջին անգամ չորս կողմը նայելով, կարծես ցանկանում էր համոզուել, որ ոչ ոք չի հետևում նրան, նա յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, ուր որ անհետացաւ։

Դա կատարեալ շան բուն էր։ Հարկաւոր էր ծանր դռան նման մի ինչ որ բան յետ հրել, որպէս զի մարդ մտնի մութ կացարանը, ուր մտնողին միանգամից բռնում էր ներքնայարկի սպանիչ խոնաւութիւնը։

Իւր կապոցը թևի տակ բռնած, նա գրպանը խառնեց, լուցկի գտաւ և վառեց մոմի կտորը։ Կացարանը փոքր էր, դեղին կաւից շինած կախուած կիսակլոր առաստաղով, հողէ յատակով։ Գուցէ սա առաջ մառան էր, մթերանոց։ Անկիւնում հողի վրայ թափուած էր ծղոտ, և նրա վրայ վերմակ էր գցած։ Սենեակի մէջ տեղում դրուած էր մի տաբուրէտ, նրան կից ընկած էր մի մեծ քար, որը նոյնպէս կարող էր նստելու ծառայել։ Մոմի կտորի առկայծող լոյսը ինչ որ թախծալի կերպով ընկնում էր բոլոր առարկաների վրայ և աղոտ լուսաւորում էր նրանց։ Կարծեմ, ուրիշ ոչինչ չկար այս կացարանում։

Բարձրահասակ մարդը վերդրեց աթոռի վրայից մոմը և դրեց քարի վրայ. յետոյ փեշի տակից հանեց իւր բեռը և դրեց աթոռի վրայ։

Այստեղ ինչ որ տաք բան կայ—մտածեց նա, զգալով որ առաջ սաստիկ մրսած ձեռքերը այժմ տաքացել են։ Այժմ նա նկատեց, որ իւր բեռը փաթաթած էր բրդէ կանացի թաշկինակի մէջ։ Ամեն ձեռն ընկած բան գնահատելու սովորութեամբ, նա իսկոյն մտքով որոշեց, որքան կարելի է ստանալ այդ թաշկինակի համար։ Նորա արհեստի պէս դժւար գործում ոչ մի իր չպիտի իզուր կորչի։

Նա նոր սկսել էր բաց անել իւր բեռը, հաստատ համոզուած լինելով, որ նրանում նախաճաշ կը գտնի, երբ նրան զարմացրեց մի տարօրինակ հանգամանք։ Նրան թւաց, թէ կապոցը կարծես մի փոքր շարժւեց։ Նա ունքերը բարձրացրեց և առաջին րոպէին մի քիչ սառեց։ Բայց յետոյ նա ձեռ տւեց թաշկինակին և նրա ծայրը յետ տանելով յանկարծ յետ ցատկեց։

Դա մի անհաւանական գիւտ էր։ Նա չհաւատաց իւր աչքերին, էլի մի անգամ մօտեցաւ աթոռին, քարի վրայից վերցրեց մոմի կտորը և մօտեցնելով կապոցին սկսեց նայել։ Բայց դա այդպէս էր. ոչ մի սխալ չկար այստեղ։ Փոքրիկ երեխայի կլոր կարմիր դէմքը երևում էր շորերի տակից։ Նորա աչքերը խփած էին. նա քնած էր։

Սերին առաջ ուսերը շարժեց, յետոյ խաչակնքեց, կարծես ուզում էր իրանից հեռացնել մի երևոյթ, բայց միևնոյն ժամանակ նա բոլորովին պարզ հասկանում էր, որ դա երևոյթ չէ, այլ իւր առաջ պարկած է իսկական կենդանի մանկիկ։

Այդ ինչպէս կարող էր լինել։ Պարզ է, որ սայլով կին էր եկել։ Երեխան շատ փոքր է, նրան չէր կարող գիւղում թողնել. նրան իւր կաթով էր կերակրում։ Քաղաքում երեխան քնեց։ Երեխայի տեղը խանձարուրում լաւ տաք էր վերմակով և բրդէ թաշկինակով փաթաթած. մայրը չուզեց իրեն նեղել և նրան սայլի մէջ թողեց, որ առաւօտւայ քաղցր քունը վերջացնի, ինքը գնայ իւր գործին կամ ճաշարան։ Նա յոյս ունէր պահապանի արթնութեան վրայ, բայց ով կը գողանար երեխին։ Նա ում է պէտք։

Իսկ կապոցը աւելի նկատելի շարժւեց, երեխան աչքերը բացեց, յետոյ նորա փոքր շրթունքները շարժւեցին, մի ողորմելի արտայայտութիւն ստացան, և յանկարծ ճրագուէ մոմի կտորի լոյսի տակ, այդ բնում լսւեց մանկական մի թոյլ ծւոց։ Սերին մի րոպէ նայեց և ականջ դրեց, յետոյ վազեց դռան մօտ, փականով

պինդ փակեց, ապա վերադարձաւ իւր բեռի մօտ և բոլորովին շփոթեալ կերպարանքով նստեց քարի վրայ։

Անապասելի դէպքից յետոյ և զարմանքից նորա խելքը գլուխը չէր գալիս։ Իսկ երեխան լալիս էր, նորա ձայնը քանի գնում, այնքան զլւում էր։ Մեծ ճանապարհով անցնող մարդիկ կարող էին և ուրով գնացողներ լինել, որոնք դրա վրայ ուշք կը դարձնէին։ Ի՞նչ պէտք էր անել։

Այն ժամանակ նա խնամքով վերցրեց երեխին, սկսեց մանգալ սենեակում, կամացուկ մի կողմից միւսը օրօրել նրան։

— Դէ, քնիր, քնիր, քնիր! ասում էր նա իւր ձայնի արտայայտութեամբ աշխատելով հանդարտեցնել նրան։ Ի՞նչ օգուտ քեզ, որ ճաս. քնիր։

Նա կեանքում դեռ ոչ մի անգամ երեխայ ձեռին չէր բռնել, բայց գիտէր որ նրանց օրօրելով են քնացնում։ Եւ նա այդ անում էր։ Նա տարօրինակ բան էր զգում, երբ երեխան նրա ձեռում սկսեց հանդարտւել և վերջը քնեց։ Ահա, տեսէր, բոլորը նրան գազան են համարում, երես են դարձնում նրանից, իսկ մանկիկը հանդարտւում է, քնում է նորա ձեռքին, ինչպէս մի կնոջ ձեռքին։

Դարձեալ նա քարի վրայ նստած էր նրա մօտ, նայում էր խփած աչքերին, և նրա մտքերը թափանցում էին իւր սեփական կեանքի խորքը, և այդ կեանքը ամբողջովին կենդանի պատկերանում էր նրան իւր մի շարք դէպքերով։

Այդ կեանքում ոչ մի ուրախալի բան չկար։ Նա յիշում էր իւր երեխայութիւնը, յիշում էր մօրը, որը միշտ լալիս էր և ման էր գալիս երեսը կապոյտ բծերով ծածկւած, հօրը, որը միշտ հարբած էր, ծեծում էր և իրեն և մօրը։ Յետոյ, երբ ինքը պարեկան եղաւ, նրան տւին վարպետի մօտ կօշկակարութիւն սովորելու։ Այդ ժամանակից նա մի բան է յիշում միայն,—որ նրան այստեղ էլ ծեծում էին, ինչպէս տանը. բայց, բացի այդ, նա յիշում է նաև այն թախիծը և մենակութիւնը, որոնք այն ժամանակ միացան նորա ամբողջ կեանքին։ Յետոյ նորա բոլոր ազգականները մեռան, չկար մայրը, միակ արարածը, որը նրան սիրում էր. բայց հօր համար էլ էր նա ցաւում, թէև նա իւր ամբողջ կեանքում նրան ոչ մի լաւութիւն չէր արել։

Արհեստը նրան չը յաջողուեց։ Երբ մարդ միշտ զգում է մենակութեան թախիծը, երբ նա չունի ոչ մի մտերիմ, երբ նրան ոչ ոք չէ սիրում, նա գործի մասին չի կարող մտածել։ Արհեստանոցից նրան շուտով դուրս արին, և նա փողոց ընկաւ։ Ահա այստեղ սկսեց այն կեանքը, որը յետոյ երբէք չը վերափոխուեց։ Քաղցը ստիպեց նրան միջոցներ հնարել սննդի համար մի բան գտնելու։ Նիհար, պատառոտած, վայրենի կերպարանքով, նա իւր համար չը-կարողացաւ պարապմունք գտնել։ Նա ընկաւ նոյնպիսի թշուառների հասարակութեան մէջ, որոնք նրանից առաջ խնդիրը վճռել էին։ Նա սկսեց իւր համար հաց ճարել մանր գողութիւններով, բանտ էր ընկնում, յետոյ դարձեալ սկսում էր առաջուայ գործը և յետոյ էլի բանտ էր ընկնում։ Քանի անգամ նա մտածել էր ազնիւ աշխատանք սկսել! Քանի անգամ նրան մինչև անգամ յաջողուել էր այդ սկսել, բայց խոյսն իմանում էին, թէ ով է նա, որտեղից է դուրս եկել, և նրան մերժում էին ու էլի դուրս գցում փողոց։

Իւր կեանքի համար մշտական երկիւղը, բոլոր մարդկանցից և ամէն բանից վախ, մշտական զգուշութիւն և միևնոյն ժամանակ միշտ մենակ ու մենակ... Արհեստակիցները չէին կարող նրան ընկեր լինել։ Նոքա բոլորեքեան միևնոյն կտորին էին աչք տնկում, բոլորը քաղցած էին։ Մէկի ամենաչնչին յաջողութիւնը նրանց կարող էր կուեցնել և թշնամիներ դարձնել։

Եւ ահա նա այժմ յիսուն տարեկան է։ Նորա մազերը նոսրացել են և ճերմակել. նորա ամբողջ դէմքը ծածկուած է մանր խորշոմներով, ճակատը խոր ծալքերով կտրտուած է, բայց նա դարձեալ մենակ է ու մենակ...։ Միակ բանը, որ նա ունի, դա իւր խիւղն է, սակայն այն էլ նա չի կարող համարել իւր մշտական բնակարանը։ Իրան նման շատ մարդիկ քարշ են գալիս այս բնեռում, բայց նրանք միշտ ստիպուած են տեղերը փոխել, որ չը լինի թէ նրանց գտնեն։

Նա վեր կացաւ և կանգնեց աթոռի մօտ մի քիչ թեքուած, որ լաւ տեսնի երեխայի երեսը։ Մոմը աղօտ վառուում էր, նա կարծում էր որ երեխայի համար այդպէս պարկել անյարմար է. նա սկսեց նրա համար տեղ շինել, որ նման էր ծտի բնին, ինչ որ փալասներից, որոնք գտնուեցին նրա անկողնում։ Երեխան քնած էր։

Ամբողջ կեանքի ընթացքում նրա մօտ ոչ մի անգամ կենդանի արարած չէր եղել։ Նա բոլորից վախենում էր և բոլորին նայում էր, ինչպէս թշնամիների. բայց սա, այս փոքր կենդանի արարածը այստեղ նորա մօտ է, և նա նրանից չի վախենում։ Բայց չէ՞ որ դա միակ արարածն է, որից նա չէ վախենում։ Ուրաքանչիւր մարդ նրան կարող է փողոցում կանգնեցնել, կամ մտնել նրա որջը և ասել նրան դու գող ես! Իսկ սա կարող է միայն անօգնական կերպով լալ և օգնութիւն խնդրել։

Շուտով նա դարձեալ կը զարթի և ուտել կ՚ուզէ։ Բայց նա ոչինչ չունի։ Անկիւնում մի թիթեղեայ ջրի ման կայ ջրով լիքը. նրա կողքին տախտակի վրայ ընկած է մի կտոր սև հաց, բայց չէ՞ որ այս բոլորը նրա համար անպէտք են։ Նա մօտեցաւ դռանը, յետ տարաւ փականքը և դուռը բաց արեց։ Արդէն լոյս է. և այստեղ միայն նրա խելքը գլուխն եկաւ ու բոլորովին սթափուեց։

Ինչ անէ? Ա՛յժմ միայն ամեն բան պարզ ներկայացաւ նրան։ Ի՞նչ պիտի անի նա այս ճըլուանին։ Ախր նա ինքն իրան էլ կերակրել չէ կարողանում, ինքն էլ երբեմն ստիպւած է մի քանի օր քաղցած մնալ։ Իսկ սրան հարկաւոր է տաք պահել, նրա համար հարկաւոր է գտնել քնքուշ կ՚ուրակուր, որովհետև փոքր է և թոյլ։ Պէտք է նրան յետ տանել,—բայց ի՞նչպէս անել այդ։ Չէ՞ որ չի կարող նրան օրը ցերեկով քաղաքի միջով տանել փեշի տակ։ Ցանկարծ փողոցում աղմուկ բարձրացնի. և այն ժամանակ ամեն բան կը պարզւի։

Կրկին նա կանգնած է աթոռի մօտ և նայում է երեխին։ Նա տեսնում է, երեխան շարժեց շրթունքները և բերանը ծռեց, երևի քաղցն է նրան տանջում, և նա երազում մօրն է տեսնում, որը պատրաստւում է նրան ծիծ տալ։ Եւ Սերին խոր մտածմունքի մէջ ընկաւ։ Նորա դրութիւնը դժւար էր։ Ի՞նչ արարած ես դու,—հարցնում էր նա երեխային, որը, իհարկէ, նրա այդ հարցին չէր կարող պատասխանել։ Դու գիւղացու երեխայ ես, քեզ կը մեծացնէին գիւղացու խրճիթում, տաք տեղը, իսկ յետոյ դու բանւոր կը դառնայիր և քո ամբողջ կեանքը արտում գութանի հետ կ՚անցկացնէիր։ Քո մօտ-մարդկանցից ոչ մէկը ոչ մի ժամանակ չէ մտածել, որ դու գողի որջում կը պարկես դէմ առ դէմ մի ծերունու հետ, որը իւր

բոլոր կեանքում ուրիշի ունեցածն է գողացել, նրանով ապրել։ Չէ՞ս մրսում արդեօք, կոշտ չէ՞ արդեօք այս տախտակը, ուր պարկած ես։

Երեխան էլի սկսեց ծռմռատւել և լացեց։ Սերին այժմ աւելի փորձուածի նման վերցրեց նրան և սկսեց օրօրել։ Նա ինչ տաք էր! Եւ ինչո՞ւ, երբ երեխին բռնել էր կրծքի մօտ սիրտը այդպէս սկսեց բաբախել։ Դէ, քնիր, քնիր, դու, անողոք! Եթէ հիմա յանկարծ մէկը գար ու տեսնէր Վասկա Սերուն փոքր երեխան ձեռին! Նա չէր հաւատայ և խաչակնքելով կը փախչէր, ինչպէս սատանի խաբէութիւնից։

Իսկ երեխան դեռ լալիս է,—երևի ուտել է ուզում։ Նա յետ է տանում իւր հաստ շրթունքները, և այնպէս խղճալի արտայայտութիւն կայ նրա աչքերում!

Սերին մօտեցաւ ջրով լի ամանին, մի կտոր հաց վերցրեց և թրջեց ջրում, յետոյ աշխատեց այդ կերակուրը նորա բերանը դնել։ երեխան ծծեց հացը։ Դա նրան հանգստացրեց, նա նորից քնեց։

Այժմ Սերու գլխում մի անբաժանելի միտք էր լուն դրել՝ կաթ ճարել, եթէ մինչև անգամ դրա համար ստիպուած լինի բանտ նստել։ Նա մանկիկին պարկեցրեց իւր ձեռքով շինած բնում, մոմը հանգցրեց և դուրս եկաւ, դուռը փականով քիպ փակելով։

Թէ երկիրը, թէ երկինքը, թէ օդը, թէ ճանապարհը նրան այնպէս չէին թւում, ինչպէս առաջ էին։ Նա յուզուած էր, նա առաջ էլ միշտ յուզուած էր լինում։ Նա դողում էր վաղուան վրայ և իւր կաշու վրայ։ Բայց սա այն չէր։ Այժմ նա իւր կաշու մասին բոլորովին չէր մտածում, այլ միշտ նրա առաջ պատկերանում էր փոքրիկ կարմիր երեսը, դէպի առաջ պարզած շրթունքները, որ կերակուր էին ուզում, դէմքի վրայ թթու արտայայտութիւն, երեխայական լաց, և միայն մի բան էր զգում,—որ նրան հարկաւոր է կշտացնել։ Նա ինքն էլ երկու օր բան չէր կերել, բայց դրա մասին բոլորովին չէր մտածում։

Դուրսը արդէն լոյս էր։ Ահա և քաղաքը։ Նա արագ անցաւ ծանօթ փողոցը և մօտեցաւ բազարին։ Այստեղ այժմ սաստիկ շարժում կար, սայլերը դեռ կանգնած էին նոյն կարգով, նրանցում եռանդուն առուտուր էր սկսել բայց Սերին չը մօտեցաւ նրանց, այլ հեռուից էր նայում։ Սայլերից ոչ հեռու անցնելով, նա աշխա-

տում էր չընայել նրանց վրայ, որ ոչ ոքի հայեացքին չը հանդիպի. նրան միշտ թւում էր, թէ նոքա նրա աչքերում կը կարդան այն, ինչ որ նա ոչ ոքի չէր ասել։ Բայց նոքա ինչի՞ մասին էին խօսում։

Եւ նրա ականջին հասնում են կենդանի խօսքեր, նա կանացի լաց է լսում. խօսում են ինչ որ կորուստի մասին, երեխայի մասին։ Սակայն ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Այդ դէպքը այնքան նշանաւոր էր, որ ամբողջ բազարը ստիպւած էր միայն դրա մասին խօսել։

—Բայց ո՞ւմ էր նա հարկաւոր, նրա կարօտն ով էր—ամեն կողմից ձայներ էին լսւում։

Սերին տեսաւ քաղաքապահին, բայց այժմ նա չէր վախենում։ Հարկէ, ոչ ոք չէր կարծի, որ նա է գողացել երեխան։ Բոլորն էլ գիտէին, որ նա գող է, բայց նրա ինչի՞ն էր հարկաւոր երեխան։ Նա կարող էր տանել խամուտ, կօշիկներ, ջւալով կորեկ, ամեն տեսակ բան, բայց քիչ թէ շատ փորձւած գողը երեխային չէր գողանալ։

Երբ մօտեցել էր այն սայլին, որի վրայից տարաւ իւր կապոցը, նա անզուսպ կերպով ուզեց նայել այնտեղ։ Նա մի վայրկեան միայն գցեց իւր հայեացքը նորա վրայ և տեսաւ մի կին, որը նստած էր սայլի վրայ և հեկեկալով բարձր լալիս էր։ Նրա երեսը կարմիր էր, մազերը քանդւած էին, նա տրորւում էր։ Նրա շուրջը մարդիկ էին հաւաքւել։ Նրան մխիթարում էին. նրան ասում էին. «Մի լար։ Նա կը բերի, նա անպատճառ կը բերի։ Ո՞ւմ է հարկաւոր քո երեխան»։ Իսկ նա չէր մխիթարւում և պնդում էր.—Անիծւեմ ես, անիծւեմ! Ինձ սպանեն էլ՝ քիչ է! Վազեցի ճաշարան, իսկ երեխայիս թողի։ Տեղից չեմ շարժւիլ, մի տարի կը նստեմ, ամբողջ կեանքս կը նստեմ!

—Էհ, ես խղճում եմ նրան,—մտածեց Սերին և իսկոյն հեռացաւ։

Բայց շուտով այդ զգացմունքները նրան թողին և էլի առաջին հոգսը դարձաւ—ինչ էլ որ լինի կաթ գտնել։ Գուցէ նա արդէն զարթել է և աղաղակում է, գուցէ նա քաղցից մեռնում է։

Բազարում սարսափելի խառնաշփոթ է. գողի համար շատ յարմար բան է։ Կարելի է գողանալ, ինչ որ սիրտդ սիրում է.—կա-

պոցով կարգանդակներ, մեղրահաց, խոզի ճարպի կտոր, և ուրիշ ժամանակ նա ընտրութեան վրայ կանգ չէր առնիլ և վաղուց արդէն տանելիս կը լինէր թեւի տակ մի որևէ բան. բայց այժմ ոչ մի այդպիսի բան նրան հարկաւոր չէ։ Նրանում մի միտք կար՝ կաթ, կաթ ճարել, ինչ էլ որ լինի։ Բայց կաթ գողանալու ոչ մի հնարք չը կար, առաւօտը վաղ ծախում, վերջացնում էին, իսկ այժմ սայլերի մօտ կանգնած էին դատարկ փարչերը։

Պատահմամբ նորա ձեռքը դիպաւ գրպանում մի ծանր բանալու, և մինչև անգամ չաշխատեց յիշել, թէ ինչպէս էր այդ բանալին նորա մօտ ընկել։ Բանալին մօտ մի ֆունտ երկաթ էր։ Գուցէ նա պահել էր, որ մի ուրիշի դուռը բանայ գիշեր ժամանակ, երբ պահապանները քնեն։ Դրա մասին նա այժմ չէր մտածում։ Նա պինդ բռնեց այդ բանալուց, իբրև միակ փրկարար միջոցից և նրան իւր բռունցքի մէջ ամուր սեղմած, արագութեամբ ուղևորուեց ծանօթ խուլ փողոցը, ուր, այն փոքր տան մէջ յաճախ սաղացնում էր իւր արհեստով ձեռք բերած բաները։ Այստեղ նրան այդ բանալուն տուին երեք կոպէկ։ Այն ժամանակ նա ուղևորուեց շուկան, գտաւ կաթնավաճառին և սկսեց աղաչել նրան, որ ամանն էլ հետը տայ։ Բայց նրան բոլորն էլ ճանաչում էին, ոչ ոք արժէք չէր տալիս նորա խօսքերին։ Վասկա Սերին ամբողջ քաղաքին յայտնի էր։ Նորան չէին դիպչում այնքան, քանի դեռ չէր բռնուել։ Բայց ինչպէս կարելի էր նրան մի բան հաւատալ։

Բայց, ինչպէս երևում է, շատ արդէն ողորմելի դէմք ունէր Սերին և երևի խորը վիշտ էր ցոլում նորա աչքերում, երբ նա կաթնավաճառին աղաչում էր ամանը տալ։ — Հաւատացէք իմ խղճիս, որ այսօր երեկոյեան կը բերեմ...

Նրան խղճացին և տուին ամանը, որտեղ շատ քիչ կաթ կար։ Այն ժամանակ նա որքան ուժ ունէր սկսեց վազել քաղաքից դուրս և, երբ արդէն մօտենում էր իւր որջին, լսեց, որ երեխան սաստիկ աղաղակում է։ Նա քայլերն արագացրեց, հասաւ դռանը, փակը դուրս քաշեց, արագ մոմը վառեց և վրայ պրծաւ երեխին։

— Դէ, խմիր, խմիր! Ահա քեզ կաթ! — Ասում էր նա քնքոյշ, դողդոջ ձայնով երեխի բերանը կաթ ածելով։ Իսկ երեխան խմում էր ու կամաց-կամաց հանդարտւում։

Նա այժմ արդէն չէր քնում, բայց այնուամենայնիւ չէր էլ լալիս, իսկ Սերուն թւաց թէ նա արդէն իրեն ճանաչում է, որ նա մենակութեան ժամանակ նրա ներկայութիւնն էր ցանկանում, և որ այդ մանր աչքերում, որոնք նայում էին նրան, մի տեսակ հաւատ կայ դէպի ինքը կամ գուցէ շնորհակալութիւն, որ նա նրա համար կաթ գտաւ։ Եւ յանկարծ նրանում յայտնուեց մի տեսակ զգացում, որ դա իւր որդին է, որի հետ նա առաջին ամիսը չէ որ ապրում է,—մի ինչ որ անսահման մօտիկ և հարազատ բան էր։ Նա արդէն նրա հետ այնքան քաշ էր եկել, օրօրել էր, նրա համար կերակուր էր ճարել, և այդ նրանց մօտեցրեց։

Սերու ապաստարանը ցուրտ էր, գուցէ հարկաւոր է նրան բաց անել։ Չէ որ չի կարելի, որ նա շարունակ այդպէս կապուած պարկի։ Բայց Սերին չէր համարձակւում այդ անել. նորա մարմնիկը երևի քնքուշ և փաք է։

Այստեղ նա վերջապէս յիշեց և իւր քաղցը, վերցրեց մի կտոր հաց և սկսեց ուտել ու ջուրը վրայից խմել։ Բայց կաթին չմօտեցաւ։ Նա իրեն իրաւունք չէր համարում նրանից մի կաթիլ անգամ խմել։

Այդպէս անցաւ մի օր, ոչ մի դէպք չպատահեց թէ խիւղում և թէ նրա մօտերքում։ Տասնեակ մարդիկ անցուդարձ էին անում մեծ ճանապարհով, որը հարիւր քայլի վրայ էր, բայց ոչ ոք մինչև անգամ չէ նայում հին զօրանոցների փլատակներին, և ոչ ոքի գլուխը չէր գալիս մտածել, թէ այնտեղ ինչ է կատարւում։

Սերին ընից չէր դուրս գալիս. նա վախենում էր իւր հիւրից հեռանալ։ Ինքը շատ էր ուզում մի բան ուտել, որովհետև հացի կտորը ջրով լաւ չյագեցրեց նրա քաղցը։ Երեխան կամ երբեմն բաց էր անում աչքերը և սկսում էր լալ, երբեմն քնում էր. յաճախ Սերին նրան վերցնում էր ձեռների վրայ և օրօրում։ Մի քանի անգամ նրա բերանը կաթ լցրեց, բայց նա այդ չէր կարողանում անել և չէր կարող հաստատ ասել, արդեօք մի բան հասնում էր երեխի ստամոքսը։

Ահա սկսեց մթնել, նա էլի վառեց մոմի կտորը, որից մի քիչ էր մնացել։ Երեխան արթնացաւ, լացեց և այս անգամ էլ չէր կամենում հանդարտւել։ Փորձեց Սերին և օրօրել նրան և կերակրել, բայց նա դրանից աւելի էր աղաղակում և կարծես ճաքում էր։

Ախար ես քեզ ինչ անեմ։—ինքն իրան հարցնում էր Սերին, դու չէ որ գոռալուց պատռուում ես, ես քեզ ինչ անեմ։

Բայց գոռոցը մի տեսակ յանկարծ կտրուեց, և յոգնած մանկիկը լռեց։ Նորա աչքերը փակուեցին, և նա, երևի յոգնածութիւնից, քնեց։

Սերին յոգնած կանգնած էր նորա գլխին, և նրա մտքերը ամենամռայլ ուղղութիւն ստացան։ Ի՞նչ պիտի լինիս դու,—մտածում էր նա։ Դէ լաւ, ես քեզ համար կ'աշխատեմ ըստ իս, ինարկէ ըստ իս։ Ամբողջ կեանքս ես քեզ համար գողութիւն կանեմ, դու ինձ համար շատ թանգ ես, աշխարհիս երեսին ամեն բանից էլ թանգ։ Միայն դու ես ինձ համար թանգ։ Ես քեզ համար պատրաստ եմ ամբողջ աշխարհը կողոպտել, ես քեզ համար բանտ էլ կերթամ,—դա ինձ համար հասարակ բան է։ Բայց դու ինչ կը լինիս։ Դու փոքր հասակից ինձ մոտ կը լինիս, կը տեսնես իմ բոլոր կեանքը և կը սովորես իմ արհեստը։ Ես քեզ ուրիշ ոչինչ չեմ կարող սովորցնել։ Ես մինչև անգամ չեմ կարող մարդկանց ցոյց տալ քեզ։ Քեզ համար ամբողջ աշխարհը այս որջը կը լինի և կամ մի ուրիշ այսպիսին, և դու վայրենի կը մեծանաս։ Ցերտոյ կ'սկսես այն անել, ինչ որ ես։ Բայց լաւ է, եթէ ես կենդանի մնամ, ես քեզ չեմ թողնի կորչելու. իսկ եթէ ես մեռնեմ, ուր պիտի գնաս դու։ Դեռ երեխայ հասակում դու փողոց կընկնես, իսկ փողոցից—բանտ, իսկ յետոյ...

Եւ նա տեսաւ, ինչպէս այդ երեխայի կեանքում, քայլ առ քայլ, օր օրի վրայ կրկնուում է իւր սեփական կեանքը, և նա նրան ներկայացաւ այնպէս, ինչպէս պիտի լինի յետոյ. նոյն տեսակ տանջուած, խորտակուած մարդ, պատառոտուած, կնճռոտ երեսով, ողորմելի, ամեն բանից վախեցող, միշտ շուրջը նայող,—ինչպէս էր ինքը, Վասկա Սերին։ Նրան էլ ամենքը կ'տրտնն, ինչպէս տրում են Սերուն։ Եւ նա սարսափեց այդ մտածելիս։

—Ոչ—ասաց նա ինքն իրան,—դա չի կարելի։ Այո, լաւ է երկու հոգով, աւելի լաւ է, քան ամբողջ կեանքը մենակ նստել ցուրտ ու մութ որջում։ Բայց միայն ոչ, ոչ, դա չի կարելի։ Ամեն մարդ իրաւունք չունի երկու հոգով լինելու։

Եւ այն ժամանակ նա վճռեց։ Էլի մի անգամ զննեց նա իւր

որջը, մօտեցաւ դռանը և համոզուեց, որ դուրսը բոլորովին մթնել էր։ Այն ժամանակ նա քնած երեխին ձեռն առաւ, մի լաւ փաթաթեց նրան բրդէ թաշկինակի մէջ, նրա դէմքը ծածկեց, դրեց փեշի տակ և դուրս եկաւ որջից, մոռանալով մինչև անգամ դուռը փակել։

Թոյլ և դանդաղ քայլերով նա գնում էր դէպի մեծ ճանապարհը, ընկաւ ճանապարհը և ուղղուեց դէպի քաղաքը։ Նա որոշ միտք ունէր։ Նա գիտէր, որ մի տեղ կայ, ուր ընդունում են գտնուած երեխաներին, այն էլ գիտէր, որ այդտեղ կը փնտռէ իւր երեխային նաև այն կինը, որը նոյնպէս ողբում էր այսօր առաւօտ։ Եւ նա գնաց այնտեղ։ Երկար նա կանգնած էր նեղ փողոցում, սպասելով մինչև քաղաքի շարժումը կը վերջանայ, և փողոցներում ոչ ոք չի լինի։ Վերջապէս նա յարմար բոպէ գտաւ, մօտեցաւ փոքր տնակին, մթութեան մէջ կամաց դուռը բացեց, որը երբէք փակած չէր լինում, փեշի տակից իւր բեռը հանեց, սեղմեց կրծքին, խնամքով դրեց նրան փայտէ նստարանի վրայ, որը այնտեղ էր։ Ապա նա նոյնպէս կամաց ծածկեց դուռը և հեռացաւ։

Եւ նրան թւաց, թէ կրծքից սիրտը պոկեց և մշտապէս թողեց այն տնակում։

Այժմ նրանում նոր հոգս առաջացաւ։ Օր ու գիշեր նրա սիրտը ցաւում էր, նա չէր կարողանում կանգնել, չէր կարողանում նստել իր բնում, այլ մի բան միշտ քաշում էր դուրս, դէպի խարմ օդը։ Միշտ մութ ու խաւար էր այդ կացարանը, միշտ նա ցրտից դողացել էր։ Բայց այժմ նա նրան մի մեայլ գուբ էր թւում, ուր նրան գցել էին ամբողջ կեանքի մեղքերի համար։ Սխար վաղուց չէ որ այստեղ փայլում էր արևի ճառագայթը և այնպէս տաք էր։ Դա երկար չտևեց, բայց կարելի է միթէ երբևիցէ մոռանալ։

Նա անհանգիստ էր քնում, իսկ երբ արթնանում էր, առաջին միտքը երեխայի մասին էր։ Ո՞ւր է նա. արդեօք մայրը նրան գտաւ։ Նա ուզում էր որ մայրը անպատճառ գտնէր։ Եւ նա առաւօտը դեռ մթանը գնում էր բազարի հրապարակը և ուշադրութեամբ սաստիկ լարում էր աչքը և ականջ, նայում էր գիւղացոց սայլերին և ականջ դնում խօսակցութիւններին։ Եւ ահա, մի անգամ նա տեսաւ ծանօթ սայլը և նրա վրայ նստած կնոջը։ Երի-

տասարդ կինը ձեռին բռնել էր ուղիղ կրծքի մօտ մի երեխայ, փաթաթած նոյն բրդէ թաշինակի մէջ, կերակրում էր նրան։

—Էհ, մրաձեց Սերին, նրան նայելով,—ահա դու բաղդաւոր ես, յիմար կին.—դու նրան ձեռքիդ ես բռնել, ուղիղ սրտիդ մօտ։ Դու նրա աչքերին ես նայում... Իսկ եթէ դու գիտենայիր, նա որտեղ է եղել, ում ձեռքերն են նրան կրել, ում ձայնն է նրան օրօրքով քնացրել... Եթէ դու գիտենայիր, թէ ինչ վիճակ էր սպասում քո որդուն... Եթէ միայն դու գիտենայիր... Ախ, եթէ դու կարողանայիր հասկանալ, բաղդաւոր յիմար կին, ինչ քաղցր յոյս սրտիցս կտրեցի և քեզ տուի... Եւ ինչպէս ինձ, ողորմելի գողիս, խեղճ, մենակ, ծերունի Վասկա Սերուս համար սառն է, սառն է կեանքը աշխարհիս երեսին...